թեամբ Վրաց թագաւորութեան, ինչպէս ցոյց է տալի հերակլ Բ. Վրաց արքայի հրովարտակը՝ տուած Սանահնեցի երկայնաբազուկ Ըղդութեանց տոհմի սերնդաբար յաջնուական շառաւիղէ շառաւիղ պարոյ համար, յորոյ է և Յովսէփ անուանեալ կաթուղիկոսը։ Հրովարտակն է այս օրինակ.

«Ողորմութեամբն Աստուծոյ Մեք՝ հերակլ երկրորդ արքայ Վրաց և արքայ Կախեթու և դլխաւոր ժառանգ Մըցխեթու, Աթաբէկու, իշխեցօղ Խաղախու, իշխօղ Բօլշալուի, իշխօղ Ջամաթիլու, իշխօղ Կախու, իշխօղ Ջաքու, իշխօղ Ջ[illegible], տիրօղ և հրամայօղ Գանձակու, Երեւանու և այլոց։

Որովհետեւ ամենայն երեւելի ազգաբանութիւն ի հնութենէ ազգայ հաստատի, և երեւելի նախնեօք, վասն որոյ՝ չէ անպատճառ և անտեղի՝ որ ի մէնջ վկայութիւն տայի Ըղդութեանցն, որք են երկայնաբազուկք, որ են ի միջոյ Սոմխեթու, այսինքն Հայաստանու, և ի Վերիայու, այսինքն Վրաստանու, ազգ մեծ և երեւելիք, որպէս վկայեն պատմագիրքն մեր, և մանաւանդ՝ Թադեոսեայ Թոմարայ և Բուստաւեանայ պատմութիւնքն, վասն Զաքարիայ իշխանին և մեծ Սպասալարին, և Յովաննէս Աթաբէկին, որոց հաւատարմութիւնն՝ որ առ Բագրատունի թագաւորն Վրաց, քաջայայտ իսկ է յամենայն արձանագիրս, եւս առաւել՝ ի վերայ իշխանական նշանայ նոցա, որ պրուշեցեալ է այսպէս. Վասն՝ սիղն արծաթով, ի վերայ դրօշակ՝ որպէս նշան սպարապետութեան, յորոյ վերայ նկարեալ կայ պատկերն ամենասուրբ Աստուածամօր, որ ընդ ձախմէ ընդգրկեալ ունի զՈրդին իւր՝ զԲանն Հօր յաւիտենականի, և ի ներքոյ պատկերին՝ յոչ կողմն կայ կարկառեալ բազուկ՝ հանդերձ Սրով, իբր բացայայտիչ քաջութեան տղայ իւրեանց և յահեակ կողմն վասն՝ երեան ի վայր եղեալ, և ի վերայ նորա նիզակ ուղղակի եղեալ, և այսու ամենայնիւ են պատկառելիք՝ վերոյ իշխանական պատկաւ։

Զսոցա ամենահռչակ ազգաբանութիւնն բացայայտեմք ամենեցունց, թէ այսպիսի պատուելի անձինք են եղեալք, որպէս բացայայտեցաք իսկ ի սմա ըստ պատշաճին, բոլորովին արդարութեամբ և նշանաւ։